ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի մայիսի 22-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Առավոտ» օրաթերթ, 15.03.2024, N 047) հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր **Նազելի Գառնիկի Սուքիասյանի**՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի մարտի 15-ի N 047 համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար**: «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի N 9 - 1 որոշմամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 9-րդ կետի համաձայն՝ «**Պրոֆեսորի** պաշտոն կարող են զբաղեցնել այն անձինք, ովքեր համապատասխան մասնագիտությամբ ունեն գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում, կամ գիտությունների դոկտորի կամ թեկնածուի (PhD) գիտական աստիճան և հրատարակված առնվազն 20 գիտական աշխատանք (այդ թվում 4-ը՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում), հեղինակ են (կամ համահեղինակ են) դասագրքի կամ ուսումնական ձեռնարկի կամ մենագրության, ունեն 15 տարվա գիտմանկավարժական ստաժ:»: Հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2024 թվականի ապրիլի 5-ին ռեկտորի

ժամանակավոր պաշտոնակատարին դիմում է ներկայացրել հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Նազելի Գառնիկի Սուքիասյանը: Պրոֆեսորի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը (առկա են նաև ատեստավորման (վերապատրաստման, որակավորման բարձրացման) փաստաթղթերը):

Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Ն.Գ.Սուքիասյանը ծնվել է 1980 թվականի օգոստոսի 31-ին Երևանում: 1987-1997 թթ. սովորել և ավարտել է Մ.Գորկու անվան N 4 միջնակարգ դպրոցը: 1997 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբական ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտության առաջին կուրս, որը գերազանցության դիպլոմով ավարտել է 2001 թվականին՝ ստանալով իրավաբանի որակավորում: 2003-2006 թթ. ձևակերպվել է հայցորդ ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնում և կատարել ծրագրով նախատեսված հայցորդի իր պարտականությունները:

Ն.Գ.Սուքիասյանը 2007 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Բանկային գործունեության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02՝ «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից նրան շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2010 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Իրավաբանություն» մասնագիտությամբ: 2020 թվականին Հայ-ռուսական համալսարանում գործող իրավագիտության 063 մասնագիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ԺԲ.00.02՝ «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈԿ-ի (ներկայում՝ ԲԿԳԿ) կողմից նրան շնորհվել է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 2023 թվականին՝ պրոֆեսորի գիտական կոչում «Իրավագիտություն» մասնագիտությամբ: Ն.Գ.Սուքիասյանը ունի տվյալ բնագավառի ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 50 է (1 դասագիրք, 1 մենագրություն, 1 կոլեկտիվ մենագրություն, 8 ուսումնական ձեռնարկ, որից 4-ը՝ համահեղինակությամբ, 26 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական

ամսագրերում, որից 1-ը՝ համահեղինակությամբ, 13 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում, որից 1-ը՝ համահեղինակությամբ):

Աշխատանքային գործունեությունը: Ն.Գ.Սուքիասյանը 2002-2010 թթ. աշխատել է Երևանի ֆինանսաբորսայական համալսարանում որպես դասախոս, 2003-2012 թթ.՝ «Եվրասիա» միջազգային համալսարանում՝ դասախոս, իրավագիտության ամբիոնի վարիչ: Ն.Գ.Սուքիասյանը 2006 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. 01.09.2006 - 27.12.2012՝ տնտեսական պատմության և իրավագիտության ամբիոնում՝ ասիստենտ, 27.12.2012 - 02.07.2013՝ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում՝ ասիստենտ, 02.07.2013 - 05.02.2024՝ իրավագիտության և քաղաքագիտության (ներկայում՝ հասարակագիտության) ամբիոնում՝ դոցենտ, 2024 թվականի փետրվարի 5-ից առ այսօր՝ հասարակագիտության ամբիոնում՝ պրոֆեսոր: Ն.Գ.Սուքիասյանը համատեղության կարգով աշխատում է նաև ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում՝ դոցենտ (2008 թվականից մինչ օրս), Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնում՝ դոցենտ (2020 թվականից մինչ օրս), «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնում՝ դոցենտ (2021 թվականից մինչ օրս): 2021 թվականից Հայ-ռուսական համալսարանում գործող իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի անդամ է, 2023 թվականից ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի թիվ 11/5-Ա որոշմամբ 3 տարի ժամկետով խորհրդի անդամ է:

Տիրապետում է հայերենին, ռուսերենին և անգլերենին:

Ամուսնացած է, ունի 1 դուստր և 2 որդի:

Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի 2024 թվականի ապրիլի 23-ի նիստում (արձանագրություն N 10) քննարկվել է հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ն.Գ.Սուքիասյանի՝ ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 22-րդ կետի պահանջներին համապատասխան հավակնորդի վերաբերյալ կարծիք արտահայտելու և քվեարկությամբ երաշխավորելու մասին հարցը: Բաց քվեարկության արդյունքներով (կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) ամբիոնը երաշխավորել է Ն.Գ.Սուքիասյանի թեկնածությունը ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում:

Գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 30-ի, ժամը 15:00-ի նիստում (արձանագրություն N 4) քննարկվել է

հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ն.Գ.Սուքիասյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 23-րդ կետի պահանջներին համապատասխան հավակնորդի՝ հայցվող պաշտոնին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն տալու մասին հարցը: Հավակնորդի՝ հայցվող պաշտոնին համապատասխանության հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքներով (մրցութային հանձնաժողովի 10 անդամից նիստին ներկա էին 9-ը. կողմ՝ 9, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է, որ հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ն.Գ.Սուքիասյանի թեկնածությունը համապատասխանում է հայցվող պաշտոնին: Ա.Ա.Մկրտչյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Նազելի Գառնիկի Սուքիասյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. գիտական խորհրդի 60 անդամից նիստին այդ պահին ներկա էին 49-ը. կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին այդ պահին ներկա էին 51-ը, քվեարկությանը մասնակցել են 51-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի ապրիլի 14-ի N 9 - 1 որոշմամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ակադեմիական կազմի ձևավորման կանոնակարգի» 31-րդ

կետը, հասարագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 3 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 51, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հասարակագիտության ամբիոնի պրոֆեսորի (իրավագիտություն) թափուր պաշտոնում համարել ընտրված իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նազելի Գառնիկի Սուքիասյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Պարբինյան**

2024 թ. մայիսի 22
Երևան